ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» նոյեմբերի 2012թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքին անհատույց սեփականության իրավունքով գույք փոխանցելու մասին» N1269-Ա որոշումը և ղեկարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով պատկանող՝ Գոգոլի 2 հասցեում գտնվող ենթակայանի շենքը, կարգավորիչ կայանքի շենքը, շինությունը, պարիսպը, լողավազանը (ընդամենը 1221800 դրամ սկզբնական արժեքով և 0 դրամ մնացորդային արժեքով) և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.3930 հեկտար հողատարածքը (վկայական՝ N 2486316, տրված՝ 23.06.2008թ.):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքին անհատույց սեփականության իրավունքով գույք փոխանցելու մասին» N1269-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով պատկանող՝ Գոգոլի 2 հասցեում գտնվող ենթակայանի շենքը, կարգավորիչ կայանքի շենքը, շինությունը, պարիսպը, լողավազանը (ընդամենը 1221800 դրամ սկզբնական արժեքով և 0 դրամ մնացորդային արժեքով) և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.3930 հեկտար հողատարածքը (վկայական՝ N2486316, տրված՝ 23.06.2008թ.) անհատույց սեփականության իրավունքով փոխանցել է Երևան քաղաքային համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել ավագանու համապատասխան որոշմամբ ընդունելու նվերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ